

ԾՐԱԳԻՐ

**«ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
 ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ» ԹԵՄԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

2021-2023թթ., ք. Երևան (ԱՆ Հանրապետական գիտաբժշկական գրադարան) կամ «Google
 Meet» կամ «Զում» ծրագրեր

Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա

Թեմա	Դասախոս	Տևողություն (ժամ)
Ապացուցողական բժշկության սկզբունքներ ու մեթոդաբանություն		
Պատմական ակնարկ՝ գաղափարի զարգացումը, հասկացության սահմանումը, ստեղծման նախադրյալները:	Ռ.Ա. Հովհաննեսյան	0,5
Կլինիկական համաճարակաբանության (ԿՀ) սկզբունքները և մեթոդաբանությունը:		2,0
Ապացուցողական բժշկության (ԱԲ) սկզբունքները և մեթոդաբանությունը:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
ԿՀ (տեսակի պահպանում) և ԱԲ (անհատի պահպանում) շփման եզրերը ու տարբերությունները:	Ռ.Ա. Հովհաննեսյան	0,5
Ֆոնային և հիմնական (ճակատային) կլինիկական հարցեր (PICO համակարգ):	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Կլինիկական հարցերի հիմնական տեսակներ, հարցերի շարադրանքի հաջողականություն:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Կլինիկական որոշումների կայացման սկզբունքները և բնութագրիչները՝ գիտական և մարդասիրական մտածողություն:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Կլինիկական որոշում կայացնելու «Ծառ»:	Ռ.Ա.Հովհաննեսյան	0,5
Տարբեր պատճառների ներգործությունը համալիր բուժական արդյունքի մեջ, Պլացեբո արդյունք, Հոտորնի արդյունք:	Ռ.Ա.Հովհաննեսյան	1,0
Բուժման եղանակների համեմատում (վերահսկում):	Ռ.Ա.Հովհաննեսյան	0,5
Կլինիկական ելքեր՝ (surrogate outcomes), (true outcomes):	Ռ.Ա. Հովհաննեսյան	0,5
Բժշկական գիտելիքների մակարդակներ:	Ռ.Ա. Հովհաննեսյան	0,5
Կլինիկական իրավիճակների սցենարներ:	Ռ.Ա. Հովհաննեսյան	2,0
Ապացուցողական բժշկությունը Հայաստանում՝ հիմնախնդրի իրավիճակային վերլուծություն, ներդրման խոչընդոտները, հնարավորությունները և ուղիները:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0

Գիտական կլինիկական հետազոտությունների պլանավորման և անցկացման սկզբունքներ ու մեթոդաբանություն		
Կլինիկական հետազոտության պլանավորում՝ նպատակը ու խնդիրները, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, արդյունքների վերլուծությունը, եզրահանգումները:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Պատշաճ կլինիկական գործունեություն (Good Clinical Practice)՝ մարդու մասնակցությամբ հետազոտությունների ծրագրման և անցկացման միջազգային բարոյական և գիտական չափորոշիչներ:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Կառուցվածք (design)՝ դիտարկումային հետազոտություններ (observation study) և պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներ (randomization), «կույր» եղանակ (“blinding” or masking method):	Տ.Ա. Քամայան	2,0
«Ոսկե» չափորոշիչ (gold standart), լաբորատոր ցուցանիշների միջին արժեքներ (reference test), հետազոտման քանակական և որակական եղանակներ:	Տ.Ա. Քամայան	1,0
Կլինիկական հետազոտությունների բնութագրիչներ. ճշտություն (accuracy), ճշգրտություն (precision), հուսալիություն (reliability), հավաստելիություն (validity):	Տ.Ա. Քամայան.	1,0
Համակարգված ամփոփ տեսություն (systematic review) և գերվերլուծություն (meta-analysis)՝ համակարգված ամփոփ տեսության կառուցվածքը և մշակման մեթոդաբանությունը, համակարգված ամփոփ տեսության և գրականության տեսության միջև տարբերությունը, գերվերլուծության մշակման մեթոդաբանությունը:	Տ.Ա. Քամայան	2,0
Կլինիկական հետազոտությունների որակի գնահատում՝ «ապացույցների ստորակարգություն», հետազոտության մեթոդաբանական գնահատատում, հետազոտության կենսաբարոյագիտական գնահատատում:	Տ.Ա. Քամայան	1,0
Գիտական կլինիկական հետազոտությունների անցկացման պատկերը Հայաստանում՝ գիտաբժշկական հոդվածներ, ատենախոսությունների թեզեր, գիտական աշխատանքների գրախոսման համակարգը:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Բժշկագիտական տեղեկատվության աղբյուրներ և դրանց որոնման եղանակներ		
Անհրաժեշտ բժշկագիտական տեղեկատվության որոնման ռազմավարություն՝ ի՞նչ, ինչի՞ համար և ինչպե՞ս է պետք կարդալ:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Բժշկագիտական գրականության էլեկտրոնային և ձեռքի որոնում, ընթերցման ալգորիթմը, անհրաժեշտ տեղեկատվության «զտում», գիտնականի «աղբարկը»:	Մ.Գ. Խաչատրյան	1,0
Բժշկագիտական ապացուցողական տեղեկատվության համակարգ (4S studies, syntheses, synopses, systems):	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0

Ապացուցողական բժշկության տվյալների էլեկտրոնային շտեմարաններ (Cochrane library, UpToDate, Ovid, Clinical Evidence etc.), որոնման ալգորիթմ, արդյունքների կիրառման եղանակները կլինիկական գործունեության մեջ:	Մ.Գ. Խաչատրյան	1,0
Բժշկագիտական տեղեկատվության ժամանակակից տեխնոլոգիաներ		
Պատմական ակնարկ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում՝ հին քարե դարից մինչ մեր օրերը:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Տեղեկատվական գրագիտություն (information literacy)՝ մեդիագրագիտություն (media literacy), համացանցային գրագիտություն (network literacy), համակարգչային գրագիտություն (computer literacy), համընդհանուր կրթական գրագիտություն (traditional alphabetic literacy), գրադարանային գրագիտություն (library literacy), մշակութային գրագիտություն (cultural literacy), տեսողական գրագիտություն (visual literacy):	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Գիտություն և տգիտություն՝ ակնհայտ, բացահայտ, հստակ (explicit) և աննկատ, թաքնված, ծածուկ (implicit) գիտելիքներ:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Գիտակցված/իմաստավորված ներդաշնակություն (cognitio resono), գիտակցված աններդաշնակություն (cognitio dissonantia), չգիտակցված աններդաշնակություն (noncognitio dissonantia):	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Կենսավիճակագրության հիմունքները բժիշկների համար		
Պատմական ակնարկ՝ ի՞նչ, ինչպե՞ս և ինչի՞ համար հաշվարկել, հաշվարկը Բաբելոնից մինչ մեր օրերը, «պետականաբանություն», «քաղաքական թվաբանություն», մաթեմատիկական վիճակագրություն, բժշկական վիճակագրություն:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
«Ոչ գիտական» բժշկություն, բժշկական սխալներ և մոլորություններ, բժշկության մեջ վիճակագրության ներդրման առաջին փորձերը, «փոքր ընտրանքների» տեսություն:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Զրոյական վարկած, նորմալ բաշխում, ամբողջություն և ընտրանք, հավանականություն և վստահելիություն, համահարաբերակցություն և հետընթացություն, դիսպերսիա և միջին քառակուսի շեղում, վստահելիության միջակայք (confidence interval):	Ա.Մ. Մարտիրոսյան	2,0
Տվյալների գնահատում. քանակական և որակական ցուցանիշներ, պարամետրիկ և ոչ պարամետրիկ թեստեր, վիճակագրական ծրագրեր:	Ա.Մ. Մարտիրոսյան	1,0
Կապակցման աղյուսակներ (crosstabs)՝ բացարձակ (absolute risk) և հարաբերական (relative risk) ռիսկեր, շանսերի հարաբերություն (odds ratio):	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Կենսաբարոյագիտության և բժշկական բարոյագիտության ժամանակակից խնդիրները		
Պատմական ակնարկ՝ տերմինաբանությունը, բժշկական բարոյագիտության հասկացությունը Հիպոկրատից մինչ մեր օրերը, մարդու	Լ.Ռ. Քասյան	0,5

իրավունքների մասին օրինագծեր, Համաշխարհային բժշկական միության կողմից ընդունված հոչակագրեր և հայտարարություններ, բժիշկների միջազգային վարքականոն:		
Կենսաբարոյագիտության ստեղծման նախադրյալները, զարգացման փուլերը, բժշկական բարոյագիտության և կենսաբարոյագիտության տարբերությունը:	Լ.Ռ. Քասյան	0,5
Կենսաբարոյագիտության սկզբունքները՝ տեղեկացված համաձայնության սկզբունք, չվնասելու սկզբունք (primum non nocere), հիվանդի բարեկեցության սկզբունք, արդարության սկզբունք:	Լ.Ռ. Քասյան	0,5
Էթանազգիա, վիժումներ, օրգանների փոխապատվաստում:	Լ.Ռ. Քասյան	0,5
Ամոքիչ (պալիատիվ) բժշկություն, հաշմանդամների խնամք, հոսպիսներ:	Լ.Ռ. Քասյան	0,5
Կլոնավորում, «սուռզատային» մայրությունը, գենային «ինժեներիա»:	Լ.Ռ. Քասյան	0,5
Բժշկի և պացիենտի փոխհարաբերություններ՝ «սուրբ ճշմարտություն» թե՛ «սուրբ կեղծիք»:	Լ.Ռ. Քասյան	0,5
Բժշկության և դեղագործության ոլորտների շփման եզրերը ու փոխհարաբերությունները, բժիշկների և դեղագործական կազմակերպությունների/դեղագետների փոխհարաբերությունները:	Ռ.Ա. Հովհաննեսյան	0,5
Ապացուցողական բժշկության և կենսաբարոյագիտության շփման եզրերը: Գիտական կլինիկական հետազոտությունների անցկացման կենսաբարոյագիտական սկզբունքները:	Ռ.Ա. Հովհաննեսյան.	0,5
Կենսաբարոյագիտությունը և բժշկական բարոյագիտությունը Հայաստանում՝ հիմնախնդրի իրավիճակային վերլուծություն:	Ռ.Ա Հովհաննեսյան	0,5
Առողջապահության և բժշկության չափորոշավորում		
«Չափորոշիչ» հասկացությունը՝ տերմինաբանություն, բժշկության չափորոշչավորման նպատակը և խնդիրները, տարբեր տեսակի չափորոշիչների համեմատական գնահատականը:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Բժշկական օգնության որակի գնահատական՝ Տոնապետյանի «եռյակ»-ը, բժշկական միջամտությունների գնահատման «երեք սյուն»՝ արդյունավետություն, անվտանգություն և մատչելիություն:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Բժշկական չափորոշիչների մշակման մեթոդաբանություն՝ կլինիկական ուղեցույցներ, հիվանդի վարման գործելակարգեր, ախտորոշման և բուժման այգորիթմեր:	Ռ.Ա Հովհաննեսյան	0,5
Կլինիկական ուղեցույցների մշակման գործընթացն ըստ ԱՀԿ սկզբունքների:	Ա.Մ. Մարտիրոսյան	0,5
Կլինիկական ուղեցույցների մշակման գործընթացի առանձնահատկություններ, ապացուցելիության մակարդակի սահմանումը ըստ GRADE համակարգի:	Ա.Մ. Մարտիրոսյան	1,0

Ապացուցողական բժշկության մեթոդների կիրառումը բժշկական չափորոշիչների մշակման, գրախոսման և գնահատման ժամանակ:	Ա.Մ. Մարտիրոսյան	1,0
Կլինիկական ուղեցույցների տեղայնացման (ադապտացիայի) ADAPTE գործիքը:	Ա.Մ. Մարտիրոսյան	1,0
Կլինիկական ուղեցույցների որակի և ապացուցելիության մակարդակի գնատականը AGREE համակարգի օգնությամբ:	Գ.Շ. Գաֆարյան	1,0
Առողջապահության չափորոշչավորումը Հայաստանում՝ իրավիճակային վերլուծություն, անհրաժեշտության հիմնավորում, ներդրման ուղիները, կազմակերպական, մեթոդաբանական, ֆինանսական և տնտեսագիտական տեսակետները:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Ապացուցողական առողջապահություն		
Ապացուցողական առողջապահություն (evidence-based public health)՝ համակարգված ամփոփ տեսությունների հիման վրա առողջապահության զարգացման ռազմավարական ուղղությունների ընտրություն:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Առողջապահության համակարգում ընդունված որոշումների արդյունավետության, անվտանգության և տնտեսական շահավետության ապացուցողական գնահատում:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Առողջապահական համակարգերի հետազոտություն (health systems research), առողջապահության վիճակագրություն (health statistics):	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Ֆարմակոէկոնոմիկա՝ սկզբունքները և մեթոդաբանությունը, ֆարմակոէկոնոմիկական վերլուծություն:	Ա.Մ. Մարտիրոսյան	1,0
Առողջապահության ուղիղ և անուղղակի ծախսեր (cost effectiveness analysis, cost minimization analysis, cost benefit analysis, cost utility analysis):	Ա.Մ. Մարտիրոսյան	2,0
Առողջապահության կառավարման մարտավարությունը երեք մակարդակում՝ առաջնային, որակավորված և մասնագիտացված բուժօգնությունը:	Ռ.Ա. Հովհաննեսյան	1,0
Տարբեր առողջապահության համակարգերի համեմատական գնահատում՝ արդյունավետության գնահատման ցուցիչները, հայրենական առողջապահության արդյունավետության բարձրացման ուղիները:	Ռ.Ա.Հովհաննեսյան	1,0

Թիրախային լսարան՝ ավագ բուժաշխատողներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 10-30 հոգի: